ՀՈԳԵԻՈՐ ԸՆԹԵՐՑՈՒԱՆԵՐ

ԻՍԱՀԱԿ ՎՐԴ. ՊՈՂՈՍՅԱՆ

ԱՄԱՆՈՐՅԱ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Փա՛ռք Քեզ, Աստվա՛ծ, փա՛ռք Քեզ
ամեն բանի համար, փա՛ռք Քեզ»:
Հովհան Ոսկեբերան

Եւս մեկ տարի բոլորեց իր ծնունդը, բովանդակվեց, ամբողջացավ՝ իր հին ու նոր հույզերով ու հոգսերով, երազանքներով նվիրական՝ մանկան խաղի պես զվարթ, հոսող ջրին հատուկ ինքնամաքրումի բնական, բանական բնազդով ու զգացմունքով, հաճախ ամենանուրբ, ամենասուրբ լինելու չափ ու խորախորհուրդ-խորհրդավոր կեցությամբ, որ երբեմն միայն մարդկային ներաշխարհին է հատուկ եւ Աստծուն է հայտնի: Տիրավանդ ու ավեստարանառաք խոսքով զորացած եւ խոսքին հավատարիմ՝ բովանդակ ողջ գույն ինքնահատուկ կերպով զինավորվում ու նորոգում է իր կյանքն ու կենցաղը, ինչպես որ գարնանն է ամեն բան նորոգում ու երիտասարդանում՝ շարունակ փթթացող կանաչով: Եւ մի՞թե երբեւէ այլուր գոյություն ունի այսչափ կատարյալ մեկ այլ պարգեւ...

Ամեն անգամ անբացատրելի ու անփոխառելի, անմերժելի մի իրողություն կա այս ամենի մեջ, երբ... երբ մանավանդ զգացմունքն ինքնահատուկ կերպով «մերժում է» բանականությունը: Կարելի է ասել, որ այսօրինակ պահերին մարդն ամենից ավելի է վերադառնում ինքն իրեն: Ինքնամերժումի եւ ինքնանորոգության մի հիմնարար գործառույթ ամեն անգամ յուրովի սրբագրում է ինքն իրեն, մաքրագործվում իրենով, ինչպես հոսող ջուրը՝ «մաքրագործումի» սույն ճանապարհին սրբելով եւ «օծելով» իր ներսուդուրսը՝ աստվածային ու վերառաք անհուն քնքշանքով, կատարյալով ու կատարելությամբ: Եւ այս ամենի մեջ մի՞թե առաջին բանական-զգայախառն անդրադարձն Աստծո եւ աստվածայինի գովերգումն ու փառաբանությունը չէ, որ ամեն անգամ, իբրեւ լուսառատ գալիքի մշտագնաց վկայաբանություն, հորդում է մեր շուրթերից եւ սրաթռիչ սավառնելիս իջնում մեր ականջներին. «Փա՛ռք Քեզ, Աստվա՛ծ, փա՛ռք Քեզ ամեն բանի համար, փա՛ռք Քեզ»:

Հնի ու նորի միանգամայն օրինաչափ հերթագայության այս շրջափուլը մի՞թե գայթակղիչ չէ, հեքիաթային, ինչպես քաղցր երազը, եւ նույնքան իրական, որքան աշ-

նան գույները, որքան մարդկային փափագը խոսելու, հաղորդակցվելու Արարչի հետ եւ գովերգելու իր ապրած ամեն մի վաղանցուկ վայրկյանը, որ բնության մեջ հաճախ «թիթեռային» է բնութագրվում, քանի որ փափագելի է այնքան, որքան արագաանց է, եւ անցավոր նույնքան, որքան ըղձալի. «Փա՛ռք Աստծուն՝ բարձունքներում, եւ երկրի վրա խաղաղությո՛ւն, եւ հաճությո՛ւն մարդկանց մեջ» (Ղուկ. Բ. 14):

Փա՛ռք Քեզ, որ այս անգամ եւս Քո ներկայության հաղորդն ու հավատարիմը, կարողն ու անկարողը, խորունկ ապրումն ու բազմաձայ-տարաձական տրամադրությունները հանդիպման պահ ունեցան, հավաքական ինքնամփոփումի առիթ՝ ոչ թե առանձին կամ անորոշ գալիքի սին հույսին ու տագնապներին անձնատուր, այլ՝ առանձնացած, ինչպես մանուկը խաղի ընթացքին, ինքնամաքրումի, ինքնատեսության նոր հուզումներով, որպիսիք անմիջական շարունակությունն են հեռավոր ու լուսարձակ դարերի՝ կանաչ-կապույտ ընդարձակության նվիրական անձկությանց... Ամեն անգամ յուրովի, ինքնահատուկ է Նոր տարին, քանի որ ապշելու ասպիճան չենթարկվող եւ զարմանալի, ինքնագնա մի ընթացք է՝ անհունից եկող ու դեպի հավիտյանը ձգվող: Ինչ-որ տարաձական, ծովածավալ-ընդգրկուն եւ միանգամայն բնականոն, հաստատուն շրջափուլ, որը նույն ժամանակ, կարծեք, անձնավորված է, եթե չասենք՝ ոգեւորված: Հիրավի, ծննդյան ու վախճանի ներկայություն կա այս ամենի մեջ, տարբերվող անհատականության անժիտելի իրողություն: Եւ այս ամենն անվախճան է՝ իր սկզբունքին անդավաճան լինելու չափ: Ամեն բան կյանքում իր նախընթացն ու վերջընթացն ունի, իր նախօրինակը: Նոր բան գիտենալու մարդկային տենական մղումը դեպի կյանքի ամենատարբեր ու բազմակնճիռ երեսները, աղաղակող հակասություններն ու տագնապները, հուշում են, որ կյանքն առանց զոհողությունների անկարելի է: Եւ որ ամեն անգամ ժամանակի ու տարածության մեջ թեւաբախվելով առաջին հայացքից լիակատար հակասություն ու հակադրություն առաջ բերող իրողությանց՝ ոչ թե հարկ է հմայվել կասկածանքով՝ հանդեպ սեփական լիարժեքությունը, վերապրել երբեմնի վշտերը կամ համակվել սնահավատությամբ, այլ անվրդով շարունակել ամրապնդել կյանքի ներքին, հոգեւոր հենարանը: Այն հենարանը, որտեղ ներդաշնակորեն համերաշխվում, համատեղվում են անցյալի ու ապագայի բոլոր ժամանակները, որից սկզբնավորվում է հերթական ներկան, ուր մի դրությունից անցումը մյուսին, պայմանավորված իր բնական հանգամանքով, այլ կերպ չի բնութագրվում, եթե ոչ վերափոխություն կամ գոյափոխություն: Քանզի «պառաված ու աղքատացած» թեմիսները չէ, որ պետք է հոգեսնուցեն կամ փարատեն մարդկային դյուրաբեկ անհատականությանց ինքնավերլուծությունների տառապանքները, այլ ուրախության ու խանդավառության իրական ապրումներով հոգեխառն կարեկցանքն ու հոգատարությունը, ընդսմին այն ամենը, ինչն իրավացիորեն առաջ է բերում հիրավի բարձրագույն երանություն՝ «զոհություն, փառք ու պատիվ», ինչպես պիտի նկատեր բանաստեղծը: Եւ չնկատել այս աչառու հանգամանքը՝ առնվազն նշանակում է մերժել «Հայոց սրբազան տիեզերքը», եթե չասենք՝ կատարյալն ու տիեզերականն առհասարակ: Եւ ահա զոհության, փառքի ու պատվի անձավում ծնվում է Մեկը, որ վերաբանալու է Եդեմի դռները՝ վերահաստատելու երբեմնի կորսված ուխտի ճանապարհն ու

վերակոչելու երկնի ու երկրի սրբարար Համբույրը: Նրա «արտաքին երեւույթն» արդեն իսկ բավարար է, որպեսզի լեռները շարժվեն, փոթորիկը սարսվի ու հանդարտվի, կույրը տեսնի, մութը վերանա, ցեղային՝ ամենահարազատ թվացյալ գիտակցությունը վերափոխվի ազգային ինքնագիտակցության... որ մանկան ճիչն ու կանչը կոչ դառնան ու գոյավորեն հավերժին կոչված ու դեպի անեզրն ընթացող հավիտենականի առանցքը, որ ժպիտն ու ծիծաղը դառնան տիեզերասփյուռ իրականության հիմն ու վեմն անկասելի, որ տիեզերականն ու աստվածմարդկայինը հանդիպեն՝ այլեւս չբաժանվելու չափ եւ բաժան-բաժան ու ինքնագնա հեռավորությունից չկարեկցեն միմյանց, անուղղակի եղանակով վերահաստատելով, թե իրենց բախտն էլ մնաց անդուլ ժամանակների շղարշի տակ՝ ծանր ու անշունչ դարերի երեւում: Հին ու նոր, լավ ու բարի ժամանակների մասին ամենից ավելի խորհրդածում եւ հիշում ենք այս ժամանակահատվածում: Կարելի է արձանագրել, որ մեզանում այսօր արդեն քաջահայտ վերապրումները ծնունդ եւ արդյունք են հենց այսօրինակ իրականության: Ելնելով այն հանգամանքից միայն, որ բարու, գեղեցիկի ու լավի մասին պատկերացումն ու վերաբերմունքը պարզապես չեն կարող աստվածային օրինադրության արդյունք չլինել: Չէ՞ որ տարվա ծնունդը եւս արդյունք ու հետեւանք է աստվածային ներկայության: Փա՛ռք Քեզ հազարաբերան, որ այսօր արդեն հոգ ես տարել վաղվա լուսալիր զարնան եւ ավետաբեր ծիծեռների վերազալուստին, որ ծիածանավոր ամառ լինի թե ճերմակահունդ ձմեռ, մարդկությունը՝ իբրեւ մշտական ու մշտանորոգ հայտնություն, իր ամենասրբոցում ունի արդեն ամենամեծ «աչքալուսանքի» ժառանգավոր գոյառիթը: Եւ մի՞թե երբեւէ մարդկային աշխարհը լուսավառելու համար հավերժությունը ծրարելու այլ օրինակ է եղել: Մի՞թե երբեւէ որեւէ հրեշտակ կերեւակայեր, թե պիտի թողնի հավերժագնաց երկինքը, միանա հովիվներին եւ այն էլ գովերգելու ոչ թե երկրի հեռագնաց ու սահմանաձեւ թվացող գեղեցկությունները, այլ՝ մի Մսուր, որ հետագայում պիտի դառնար լույս սրբարանը երկնի ու երկրի Սքանչելիքի: Վախն այլեւս առհավետ մերժված է: Իսկության մեջ գեթ երկյուղն է իշխում, եւ բոլորանվեր «մեծ ուրախությունը», որն ըստ էության՝ անուրանալի է, որովհետեւ աշխարհ եկող յուրաքանչյուր ոք չունի լուսավառվելու այլ մի աղբյուր (հմմտ. Հովհ. Ա. 9): Այսպես՝ գիտակցական հավատքով է, որ վերանում է աշխարհի մեղքը: Եւ եթե մեկն էլ նշան կամենա տեսնել, թող նախ մաքրի իր սիրտը (Մատթ. Ե. 8), քանի որ լույսի մեջ իսպառ խավար չի բնակվում: Եւ այսօր, երբ կրկին հայի ճամփան նվիրական է իր երազի չափ ու երկար, ինչպես համամարդկայինը, մի՞թե հիմնանորոգության այլ մի մսուր կա մեզ համար, եթե ոչ մեր սրբություն սրբոցը՝ Մայր Եկեղեցին, որի լույս օրրաններից եւ օթեւաններից փառքը, գոհությունն ու պատիվը նախանձախնդիր, ամբողջական ու խորախորհուրդ հորդում են ու ցողում մեր սիրավառ միտքն ու էությունը՝ գալիքի հարապայծառ, վսեմ ավետիսով.

«Փա՛ռք Քեզ, Աստվա՛ծ, փա՛ռք Քեզ ամեն բանի համար, փա՛ռք Քեզ»: